

Բազմապատկման տեղափոխական և զուգորդական օրենքները

Բազմապատկման տեղափոխական օրենքը՝

Արտադրիչների տեղերը փոխելիս արտադրյալը չի փոխվում:

Օրինակ՝ $87 \cdot 33 = 33 \cdot 87 = 2871$

Բազմապատկման զուգորդական օրենքը՝

Երկու թվերի արտադրյալը երրորդ թվով բազմապատկելու արդյունքը կարելի է ստանալ՝ առաջին թիվը երկրորդ և երրորդ թվերի արտադրյալով բազմապատկելով:

Օրինակ՝

$(27 \cdot 5) \cdot 6 = 27 \cdot (5 \cdot 6) = 810$

Առաջադրանքներ

1. Կիրառելով **բազմապատկման** տեղափոխական օրենքը հաշվել առավել հարմար եղանակով՝

$150 \cdot 300 \cdot 20$

$80 \cdot 600 \cdot 500$

$250 \cdot 700 \cdot 40$

$400 \cdot 600 \cdot 50$

2. Կիրառելով **բազմապատկման** զուգորդական օրենքը հաշվել առավել հարմար եղանակով՝

$30 \cdot 40 \cdot 5$

$38 \cdot 24 \cdot 50$

$15 \cdot 4 \cdot 500$

250·40·70

20·10·17

3. Կիրառելով **բազմապատկման** տեղափոխական և գուգորդական օրենքները հաշվել առավել հարմար եղանակով՝

4·138·25

80·30·50

17·8·4·50

60·40·5·20

11·2·30·50

2·140·250·5

4. Ստուգե՛ք հավասարությունը.

$$270 \cdot (5 \cdot 6) = (270 \cdot 5) \cdot 6$$

$$11 \cdot (80 \cdot 9) = (11 \cdot 80) \cdot 9$$

$$(20 \cdot 18) \cdot 4 = 20 \cdot (18 \cdot 4)$$

$$(800 \cdot 30) \cdot 50 = 800 \cdot (30 \cdot 50)$$

5. Հաշվե՛ք գումարը՝ գումարումը փոխարինելով բազմապատկումով՝

$$27 + 27 + 27 + 27 + 27 + 27 + 27$$

$$104 + 104 + 104 + 104 + 104 + 104 + 104$$

$$290 + 290 + 290 + 290 + 290 + 290 + 290 + 290 + 290$$

$$2388 + 2388 + 2388$$